**Արձանագրություն N3**

**Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի**

**21.10.2015թ. նիստի**

<u>Օրակարգ</u>

1. Ֆակուլտետի կանոնադրության հաստատում:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 36 անդամներից 33-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի դեկան և գիտխորհրդի նախագահ Ս. Աբրահամյանը զեկուցեց, որ կա ֆակուլտետային կառուցվածքային փոխություններ կատարելու անհրաժեշտություն, մասնավորապես, որ խորհուրդն ու գիտխորհուրդը պետք է միավորվեն և ստեղծվի մեկ գիտխորհուրդ՝ անդամների թվի կրճատմամբ և ուսանողների քանիինգ տոկոս ներկայության ապահովմամբ: Ամբիոնների ներկայացուցիչների քանակը պայմանավորված պետք է լինի հաստիքներով, հավանաբար մոտ հիսուն հոգի: Ուսանողների ընտրությունը կատարվելու է ուսխորհրդի կողմից:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միաձայն քվեարկության արդյունքում հաստատել ֆակուլտետի կանոնադրությունը համապատասխան փոփոխություններով:

4. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Որոշոցին՝

- Տպագրության երաշխավորել Գերմանական բանասիրության ամբիոնի դասախոս Ն. Անթառանյանի ուսումնաօժանդակ ձեռնարկը:
- Հաստատել Անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ Լիլի Կարապետյանի թեկնածությունը դոցենտի կոչման ներկայացնելու համար:
- Տպագրության երաշխավորել Ռոմանական բանասիրության ամբիոնի դասախոսներ Գ. Ղազարյանի և Լ. Շուքուրյանի դասագիրքը:
- Տպագրության երաշխավորել Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի դասախոսներ Լ. Համբարձումյանի և Ի. Սահակյանի դասագիրքը:
- Տպագրության երաշխավերել Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի դասախոսներ Մ. Օհանյանի և Ա. Օհանյանի դասագիրքը:

Գիտխորհրդի նախագահ՝ Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝ Գ. Մուրադյան

21 հոկտեմբերի 2015 թ.